

Բան մը սրտես կ'ըլլայ բոցին պատարագ
իր աչքերուն՝ ուր կը մոռնամ ես արփին 1[1]:

Երագային, ծաղիկի պես նրբաւոր,
Երբ կը ժպտի պատուհանին ետեւէն,
Թռիչներ հոգւոյս մէջ լուսաբաղձ՝ կը թելեն
Խօլ անուրջով կապոյտներու հեռաւոր:

Ու 1[1] երբ կ'երգէ ջութակին հետ սարսըռուն
Մեղմածաւալ հեշտերգն իրեն ցայգային,
Կարծես աչքերն իր լուսափաղփի կը նային
Տենդոտ պահին՝ մեջն իմ հոգւոյս ալքերուն:

34. ՈՒՌԻՆԵՐՈՒ ՇՈՒՔԻՆ ՏԱԿ...

Ա

Ուռենիներ՝, լացէ՛ք, լացէ՛ք անդադրում,
Արտասուքնիդ շիթ շիթ հոգիս կ'արծաթէ.
Ես կը փարիմ մենիկ պահին այս տրտում
Ուր ձեր հեղուկ նըւագն յուշիկ կը կաթէ:

Ծաղիկներուն գօտին դեղին, լայնարծակ
Արօտներու գիւմրիւթ իրանն երբ գրկէ,
Ու միջօրի արեւն ալ՝ խուրձ ու տրցակ
Շողերն իր՝ բիլ ժապաւենով մը պրկէ:

Կու գան կոյսերն իմ անուրջիս, հերարծակ,
Մանիշակէ բըլուրներէն ու դաշտէն,
Ես կ'ունկնդրեմ հապըշտապ ու համարծակ
Քայլերուն՝ որ լուռն ուժգնօրէն կը շեշտեն:

Ու կը պարե՛ն, իրենց նազանքն հարսենի
Ու նայուածքնին քօղքած կազի մը շուշուկ,
Իրենց վարսքին հետ կը խաղայ սիւք մը գոլ
Եւ այտերնին կակաջի պես կը շիկնի:

Իրենց մարմինն՝ ակնուանի թափանցիկ,
Իրենց հոգին՝ համբոյր համակ ու շուշան,